ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01-17

«ՍՅՈՒՆԻՔ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԿԱՐՃԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏՈՎ ՊԱՐՓԱԿՎԱԾ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» ապրիլ 2017 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (այսուհետ՝ Լիազոր մարմին), ի դեմս նախարար Սուրեն Կարայանի, մի կողմից, և «ՍՅՈՒՆԻՔ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կազմակերպիչ), ի դեմս տնօրեն Էդուարդ Ղուկասյանի, որը գործում է Կազմակերպչի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (Լիազոր մարմնին և Կազմակերպչին միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) 2017 թվականի մարտի 30-ի N 356-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 6-րդ կետը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1. Պայմանագրի առարկա է հանդիսանում Որոշման 1-ին կետով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային, Կարճևան գյուղական համայնքների և Արաքս գետով պարփակված տարածքում (այսուհետ՝ ԱՏԳ տեղակայման հողատարածք)՝ ըստ Որոշմամբ նշված սահմանագծի ստեղծված գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, էլեկտրականության մատակարարման, մեծածախ առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, մասնագիտական և տեխնիկական

գործունեության, մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտներում արտադրաարդյունաբերական և լոգիստիկ ազատ տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ)՝ կազմակերպման, ԱՏԳ ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման, կազմակերպչի կողմից ծառայությունների մատուցման, այդ ծառայությունների սակագների սահմանման, ներդրումների իրականացման, ԱՏԳ շահագործողների ներգրավման, Լիազոր մարմնի կողմից վերահսկողության իրականացման արդյունքում առաջացող և ԱՏԳ գործունեության հետ կապված այլ իրավահարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

2. ԱՏԳ գործունեության մեկնարկի պայմաններ

1. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, այդ թվում՝
   1.1 ԱՏԳ սահմանազատումը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 1521-Ն որոշմամբ հաստատված՝ սահմանագծին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան:
   1.2 Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային հսկողություն և մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ:
2. Կազմակերպիչը պարտավոր է ներկայացնել ԱՏԳ տարածքում կառուցվելիք շինությունների և ենթակառուցվածքների տեղաբաշխվածությունը հատակագծով:
3. Կազմակերպիչը պարտավոր է ստեղծել ԱՏԳ տարբերանշան և անվանում:
4. Կազմակերպիչը պարտավոր է իր ընկերության սեփականատիրոջից ստանալ գրավոր հավաստիացում առ այն, որ Կազմակերպչի սնանկ ճանաչվելու կամ ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված կարգով Կազմակերպչի հետ Պայմանագրի լուծման դեպքում, մեկ ամսվա ընթացքում կներկայացվի այլ կազմակերպիչ ԱՏԳ գործունեության անխափանությունն ապահովելու նպատակով, իսկ նոր կազմակերպիչ չներկայացնելու դեպքում՝ ԱՏԳ տարածքը նույն պայմաններով կտրամադրվի ՀՀ կառավարության կողմից ԱՏԳ կազմակերպչի ընտրության համար հայտարարված մրցույթի արդյունքում կազմակերպիչ ճանաչված համապատասխան կազմակերպությանը:
5. ԱՏԳ գործունեության մեկնարկը համարվում է թույլատրված ԱՏԳ շահագործմանը պատրաստ լինելու պահից՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 1521-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հանձնաժողովի՝ ԱՏԳ-ն շահագործմանը պատրաստ լինելու վերաբերյալ համապատասխան եզրակացության հիման

վրա: Ընդ որում, կողմերը հնարավոր են համարում ԱՏԳ տարածքի շահագործման համար նախապատրաստական աշխատանքները հիմնականում ավարտել ոչ ուշ, քան 2017 թվականի հոկտեմբեր 15-ը, իսկ ԱՏԳ շահագործման պատրաստ լինելու վերջնական ժամկետը՝ համաձայն Որոշման 5-րդ կետի: ԱՏԳ-ն նշված ժամկետում Կազմակերպչի մեղքով շահագործմանը պատրաստ չլինելու դեպքում ԱՏԳ տեղակայման հողատարածքի 50 տոկոսը՝ 16 հա մակերեսով անհատույց օտարվում է Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն «ԷՍԻԷՅ» ՓԲԸ տնօրեն Ն. Թևոսյանի գրության (Հավելված 2): Մինչև ԱՏԳ մեկնարկը ԱՏԳ տեղակայման հողատարածքը չի կարող գրավադրվել:

6. ԱՏԳ տարածքի ընդլայնումն իրականացվում է գործող կարգին համապատասխան:

3. Կազմակերպչի կողմից ապահովվող ներդրումները

1. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել համապատասխան ներդրումներ Որոշման հավելված 2-ով հաստատված գործարար ծրագրով (այսուհետ՝ Գործարար ծրագիր) նախատեսված ծավալներով և ժամկետներում՝ ըստ սույն պայմանագրի Հավելված 1-ի:
2. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել ԱՏԳ տարածքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ենթակառուցվածքների ստեղծումը՝ իրականացնելով առնվազն 3000000 (երեք միլիոն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում:
3. Հավելված 1-ում նշված ներդրումների ծավալները դրամական արտահայտությամբ կրում են ինդիկատիվ բնույթ և կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով ընթացիկ շուկայական և մակրոտնտեսական իրավիճակը:
4. ԱՏԳ գործունեության ողջ ժամանակահատվածի ընթացքում Կազմակերպիչը պարտավոր է յուրաքանչյուր շահագործողի և ԱՏԳ այլ սուբյեկտների համար կողմերի համաձայնությամբ ապահովել որակյալ ինժեներատեխնիկական ենթակառուցվածքի առկայությունն, այդ թվում՝ անխափան էլեկտրամատակարարում, նախատեսելով այլընտրանքային սնուցման հնարավորություն, գազամատակարարում, ջրամատակարարում և ջրահեռացում, աղբահանություն, հեռահաղորդակցություն, ինտերնետային կապ:
5. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել ԱՏԳ տարածքի հասարակական սպասարկման ենթակառուցվածքի առկայությունը:

4. Կազմակերպչի կողմից մատուցվող ծառայությունները և դրանց սակագները

1. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Կազմակերպիչը պարտավորվում է ստեղծված ԱՏԳ-ի տարածքում մատուցել Գործարար ծրագրով նախատեսված ծառայությունները՝ ըստ սույն պայմանգրի Հավելված 3-ով նախատեսված ցանկի:

2. Մատուցվող ծառայությունների համար Կազմակերպչի կողմից սահմանվող սակագները և դրանց չափերը համաձայնեցվում են Լիազոր մարմնի հետ:
3. Կազմակերպիչը կարող է վերանայել իր կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ համաձայնեցնելով փոփոխությունները Լիազոր մարմնի հետ:

5. Պետական մարմինների գործունեությունը ԱՏԳ-ում

1. ԱՏԳ-ում պետական ծառայությունները, բացառությամբ՝ մաքսային հայտարարագրերի ներկայացման և ընդունման, մատուցվում են մեկ պատուհանի սկզբունքով՝ միասնական ընդունարանի միջոցով՝ Կառավարության կողմից սահմանված կարգով:
2. Կազմակերպիչն անվճար տրամադրում է միասնական ընդունարանի համար տարածքն առնվազն 50 մ^2 մակերեսով:
3. Կազմակերպիչը միասնական ընդունարանին ծառայությունները մատուցում է անվճար՝ բացառությամբ հեռախոսակապի ծառայությունների:
4. Կազմակերպիչն ապահովում է անհրաժեշտ պայմաններ միասնական ընդունարանի՝ ժամանակակից տեխնիկական սարքավորումներով հագեցվածությունը և դրա միացումը պետական ծառայություն մատուցող էլեկտրոնային կառավարման համակարգերին, ինչպես նաև այլ անհրաժեշտ պայմաններ միասնական ընդունարանի անխափան գործունեությունն իրականացնելու համար:
5. Մաքսային մարմինների կողմից հսկողություն և մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար նախատեսված տարածքները Կազմակերպիչը տրամադրում է անվճար:

6. Վնասների փոխհատուցումը

1. Կազմակերպչի և շահագործողի կողմից միմյանց պատճառած վնասները փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրենց միջև կնքված պայմանագրի համաձայն:
2. Պայմանագրով և Գործարար ծրագրով նախատեսված պարտավորությունների սահմանված ժամկետներում չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպիչը պարտավորվում է երկու շաբաթվա ընթացքում Լիազոր մարմին ներկայացնել պարտավորությունների սահմանված ժամկետներում չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնավոր բացատրություն, ինչպես նաև Լիազոր մարմնի հետ համաձայնեցրած միջոցառումների ծրագիր՝ պարտավորությունները կատարելու և թերությունները շտկելու վերաբերյալ:

7. Շրջակա միջավայրի պահպանում

1. Կազմակերպիչը պարտավոր է իրականացնել ԱՏԳ տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:
2. Կազմակերպիչը հետևում է շահագործողների կողմից բնապահպանական նորմերի և պահանջների պահպանմանը:
3. Կազմակերպիչը անվճար հատկացնում է տարածք բնապահպանական նորմերի և պահանջների ապահովման նպատակով՝ անհրաժեշտ ստուգաչափիչ սարքավորումների տեղադրման համար:

8. Հաշվետվողականություն և հսկողություն

1. Կազմակերպիչը Լիազոր մարմնին ներկայացնում է հաշվետվություններ ԱՏԳ-ի գործունեության վերաբերյալ՝ Կառավարության սահմանած կարգով և ձևով:
2. Լիազոր մարմինը իրականացնում է հսկողություն ԱՏԳ օրենսդրությամբ, Գործարար ծրագրով և Պայմանագրով Կազմակերպչի համար սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ:
3. Լիազոր մարմինը հսկողության իրականացման շրջանակներում Կազմակերպչից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր ԱՏԳ օրենսդրության պահանջների, Գործարար ծրագրի և Պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ՝ գրավոր հարցման հիման վրա:
4. Լիազոր մարմինը գրավոր ծանուցում է Կազմակերպչին ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին՝ նշելով Կազմակերպչի կողմից բացատրություններ տալու և թերությունները վերացնելու ժամկետները:
5. Կազմակերպիչը պարտավոր է վերացնել Լիազոր մարմնի կողմից հսկողության իրականացման ընթացքում բացահայտված թերությունները՝ Լիազոր մարմնի հետ համաձայնեցված ժամկետներում:
6. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել մյուս կողմին իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, որոնք կարող են անբարենպաստ անդրադառնալ կողմերի պայմանագրային պարտավորությունների կատարման վրա:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

ԱՏԳ օրենսդրությամբ, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն

ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, որոնք անհնարին են դարձնում ԱՏԳ օրենսդրությամբ, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի ազդեցությունը դադարելուց հետո Կողմերը պետք է անհապաղ ձեռնամուխ լինեն ԱՏԳ օրենսդրությամբ, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը, որոնք դադարեցվել էին այդպիսի ազդեցության հետևանքով:

10. Լրացուցիչ պայմաններ

1. «ՍՅՈՒՆԻՔ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 25 տոկոսն անհատույց օտարվում է Հայաստանի Հանրապետությանը:
2. Կազմակերպիչը պոտենցիալ շահագործողի դիմելուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում պոտենցիալ շահագործողին տրամադրում է տեղեկանք ԱՏԳ-ում գործունեության պայմանների, մատուցվող ծառայությունների, դրանց սակագների վերաբերյալ, ինչպես նաև ԱՏԳ-ի գործունեությանն առնչվող այլ անհարժեշտ տեղեկատվություն:
3. Պոտենցիալ շահագործողին թույլտվությունը տրամադրելու մասին Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում պոտենցիալ շահագործողը և կազմակերպիչը կնքում են պայմանագիր:

11. Եզրափակիչ դրույթներ

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի կարգավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:
3. Պայմանագիրը կնքվում է 50 տարի ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետը չի գերազանցում ԱՏԳ գործունեության ժամկետը:
4. ԱՏԳ գործունեության ժամկետը կազմում է 50 տարի:
5. Լիազոր մարմինը և/կամ Կազմակերպիչը կարող է առաջարկել Կառավարությանը Պայմանագրում կատարել փոփոխություններ կամ լուծել այն:
6. Պայմանագրի դրույթները խախտելը կամ չկատարելը հիմք է հանդիսանում պայմանագիրը

լուծելու համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում: 7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից: 8. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 9. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
Կողմերի հասցեները և ստորագրությունները
«ՍՅՈՒՆԻՔ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, 0037, քաղաք Երևան, Ազատության 1/18
Էդուարդ Ղուկասյան _____
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցեն՝ ՀՀ, 0010, քաղաք Երևան, Մ. Մկրտչյան 5
Սուրեն Կարայան _____

Հավելված 1

Ազատ տնտեսական գոտում նախատեսվող ներդրումները (ԱՄՆ դոլար)

Կապիտալ ներդրումներ	2017թ.	2018-2019 թթ.	2020-2023 թթ.	2024-2027 թթ.	Ընդամենը
ԱՏԳ տարածքի ձեռքբերում	**20000**	-	-	-	**20000**
ԱՏԳ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը և բարելավումը, այդ թվում՝	**4125000**	**3026000**	**1584000**	**562000**	**9297000**
Շինությունների/շենքերի շինարարական աշխատանքներ, ներքին ենթակառուցվածք	2500000	2000000	1200000	450000	6150000
Սարքավորումներ, մեխանիզմներ և տեխնիկական լուծումներ	130000	180000	50000	20000	380000
Արտաքին ցանցերի, կոմունիկացիաների, ներքին ենթակառուցվածի տեղակայում	850000	600000	200000	80000	1730000
Մաքսային անցակետի համար սարքավորումներ	360000	-	-	-	360000
Բարեկարգում և կանաչապատում	45000	86000	24000	12000	167000
Անվտանգության համակարգեր	240000	160000	110000	-	510000
Մարքեթինգային ծախսեր, այդ թվում	**32000**	**139000**	**157000**	**133000**	**461000**
ԱՏԳ մասնագիտացված կայքի և տարբերանշանի ստեղծում	8000	-	-	-	8000
PR և մարքետինգային միջոցառումներ	-	90000	100000	80000	270000
Գովազդային նյութերի տպագրություն	4000	9000	7000	3000	23000
Գործարար կապերի հաստատում, պոտենցիալ շահագործողների ներգրավում	20000	40000	50000	50000	160000
Այլ գործառնական և ընթացիկ ծախսեր	**480000**	**780000**	**930000**	**980000**	**3170000**
Չնախատեսված ծախսեր	**350000**	**300000**	**200000**	**100000**	**950000**
Ընդամենը ժամանակաշրջանում	**5007000**	**4245000**	**2871000**	**1775000**	**13898000**

Հավելված 2

Հայաստանի Հանրապետություն
«ԷՍԻԷՅ» ՓԲԸ

SEA

Republic of Armenia
«SEA» CJSC

0037, Երևան, Ազատության պող. 1/18-10
Հեռ. /tel.: (37410) 252517

0037, 1/18-10 Azatutyan ave., Yerevan, RA

N ՍԱ 001-17/03

" 24 " մարտի 2017թ.

<<Սյունիք ազատ տնտեսական գոտի>>
ՍՊ ընկերության տնօրեն Է.Ղուկասյանին

Հարգելի պարոն Է.Ղուկասյան

Ի պատասխան Ձեր 14.10.2017թ. թիվ ՍԱ 14001 գրության հայտնում եմ, որ <<ԷՍԻԷՅ>> ՓԲ ընկերությունը պատրաստ է Սյունիքի մարզ, Կարճևան համայնքում գտնվող 7.00948 հա /սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 11082014-09-0002/ և 25 հա /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 15082014-09-0006/, ընդհանուր՝ 32 հա հողատարածքը, տրամադրել Ձեր ընկերության օգտագործմանը՝ **50 տարի ժամկետով**, պայմանով, որ <<Սյունիք ազատ տնտեսական գոտի>> ՍՊ ընկերության բաժնեմասի 65-75 տոկոսը անհատույց կարգով օտարվի <<ԷՍԻԷՅ>> ՓԲ ընկերությանը կամ վերջինիս կողմից նշված երրորդ անձի, իսկ 25 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետությանը:

Հարգելի պարոն Ղուկասյան, սույն նամակի պայմաններին համապատասխան ՀՀ կառավարության որոշման առկայության դեպքում մենք պատրաստ ենք կնքել համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրեր, ինչպես նաև պատրաստ ենք կրել <<Սյունիք ազատ տնտեսական գոտի>> ՍՊ ընկերության գործունեության հետ կապված ռիսկերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես 65 տոկոսի բաժնետեր:

Այդ թվում վերը նշված հողամասից 16 հա հողամասով երաշխավորում ենք <<Սյունիք ազատ տնտեսական գոտի>> ՍՊ ընկերության կողմից նշված գործարար ծրագրով նախատեսված պարտավորությունները:

Կից ներկայացնում ենք սեփականության իրավունքի գրանցման վկայականների պատճենները:

Հարգանքով՝

Ն.Թևոսյան

Հավելված 3

ԱՏԳ կազմակերպչի կողմից մատուցվող ծառայությունների սակագները

Ծառայության անվանումը	**Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ) ***	**Մեկնաբանություններ**
Արտադրա-տնտեսական տարածքների վարձակալությամբ տրամադրում	Մինչև $13/քմ/ամս.	Կախված վարձակալվող տարածքի չափից և ժամկետից՝ վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային)
Գրասենյակային տարածքների վարձակալությամբ տրամադրում	Մինչև $15/քմ/ամս.	Կախված վարձակալվող տարածքի չափից և ժամկետից՝ վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային)
Ժամանակավոր պահպանության պահեստի վարձակալությամբ տրամադրում	Պայմանագրային	
Ավտոկոնտեյներների հրապարակների (բաց հրապարակ) վարձակալությամբ տրամադրում	Պայմանագրային	
Լոգիստիկ-պահեստային ծառայություններ. -բեռների, կոնտեյներներիընդունումևբեռնաթափում,ապրանքիհսկողություն, ներպահեստայինտեղաշարժում, բեռներիվերաբարձում:	Պայմանագրային	Այս ծառայությունների գնային քաղաքականությունը կորոշարկիացվի ԱՏԳ գործարկման սկզբին
Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, ջուր, ջրահեռացում (կոյուղի), գազամատակարարում)	Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան	

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ) *	Մեկնաբանություններ
Գերարագ ինտերներ, հեռախոսաֆիկացում	Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան	
Ավտոկանգառ (պահպանվող) ԱՏԳ շահագործողների աշխատակիցների թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (արտոնյալ տարիֆ)	Մինչև $15/ամիս	
Ավտոկանգառ (պահպանվող) հյուրերի թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (ԱՏԳ տարածքի սահմաններից դուրս)	$0,2/ժամ	
Պահեստային տարածքներ	Ըստ պայմանագրի/գործարքային	Այս ծառայությունների գնային քաղաքականությունը կորոշարկիացվի ԱՏԳ գործարկման սկզբին:
Կենտրոնացված ընդունելության ծառայություններ	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ	

Կողմերի հասցեները և ստորագրությունները

«ՍՅՈՒՆԻՔ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, 0037, քաղաք Երևան,
Ազատության 1/18
Էդուարդ Ղուկասյան

ՀՀ տնտեսական զարգացման
և ներդրումների նախարարություն
Հասցեն՝ ՀՀ, 0010, քաղաք Երևան,
Մ. Մկրտչյան 5
Սուրեն Կարայան